Ծուշանիկ Կուրղինյան

Իմ հայրենիք

1

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, իսկ դու գեղեցիկների գեղեցիկն ես, իմ հայրենի՛ք:

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ առաքինի է, իսկ դու տառապում ես առաքինության համար, իմ հայրենի՛ք:

Տառապանքն եմ սիրում, ո՞վ է տառապել քեզ նման:

Սիրում եմ տոկալ, ո՞վ է տոկացել քեզ նման:

Սիրում եմ հուսալ . որքա՛ն համառ ես դու քո լավ օրերի հուսով:

2

Մի՞թե չկայի ես, երբ դու կայիր. ես ծնա քո գրկի մեջ և գոյությունս գոյության մեջ անհայտ, աննշմար կապրեր:

Դու գիտե՞ս, թե առաջ ուր էր իմ հոգին, վե՞րը թե վարը, ամպերի մե՞ջ, թե ծաղիկներում: Ես քեզ մոտ էի, շունչս շնչիդ հետ, ես՝ քո, դու՝ իմ մեջ . . .

3

Ես սիրել եմ քեզ միշտ, սակայն այդ զգալի չէր կարող լինել ո՛չ քեզ և ո՛չ էլ ինձ համար, վասնզի դու ինձ չէիր տեսել, իսկ ես զբաղված էի քո արշալույսներին ու

վերջալույսներին ողջունելով: Քո պաղ ջրերը արբեցնում էին ինձ երջանկությունով, ծաղիկները հեքիաթ էին հորինում ինձ համար, իսկ գագաթները կանչում էին վեր բարձրանալ, վեր գնալ . . . Միշտ վե՛ր . . .

4

Գիտեի՞ր, արդյոք, ո՞ւմ ես կյանք տալիս: Ես ուզում եմ քեզ համար զարդ լինել, վասնզի իմ ամենաթանկագին զարդն ես դու, իմ հայրենի՛ք: Ես զգում եմ իմ զորությունը, որ սնել ես դու և կմնամ զորավոր ամեն տեղ ու միշտ . . .

5

Տարիների ընթացքում դու զգացիր իմ այդ զորությունը . թախիծն էր գերել ինձ, վիշտն էր կապել աչքերս, սիրտս քեզ էր սիրում, հոգիս խռովել էր քեզանից, իմ հայրենի՛ք . դու էլ խռովեցիր ինձ հետ ու խամրեցրիր ծաղիկներս, իմ այն ծաղիկները, որ մի անգամ են ծաղկում . . .

6

Փախա քեզանից, լացիր դառնագին ու կանչեցիր ինձ, սակայն տառապանքն ուժեղ էր քեզանից, իսկ ես անբաժան նրա հետ . . . Ես քեզ համար լալով լացի, իմ հայրենի՛ք, ու սրտիս շարված կնճիռներին մեկի աչքը չէ հասել . կարոտդ շղթայի պես կախվեց իմ թևերից ու ողողանջում է անդադար ու ճնշում է անդադար . . .

7

Շրջեցի մենակ, ուր որ գնացի, ցավդ տարա ինձ հետ, ստվերի նման ձգվեցի վրադ, որ խորշակը չայրե քեզ: Ուզեցի միշտ կամար կապել ճակատիդ, արևից ճաճանչներ խլել, լույս ու ջերմություն տալ քեզ, ուզեցի բախտ մուրալ քեզ համար, որ ապրես ու ժպտաս, իմ հայրենի՛ք . . .

8

Ուր որ գնացի, տարա ես ինձ հետ խարույկը սիրույդ . ու ոչ մի աշուն չմարեց նրան: Ես քեզ երգեցի աղոթքների տեղ, քեզ պաշտեցի աստվածների փոխարեն: Դու ես աղբյուրն իմ զորության, իմ հայրենի՛ք . . .

Ես քեզ երգելով կերգեմ, իմ հայրենի՛ք: Ես քեզ սիրելով կարո՞ղ եմ ասել, իմ հայրենի՛ք . . .

9

Թող բախտը փշե պսակ դնե քո գլխին, իմ հայրենի՛ք, ես վարդերով կզարդարեմ այն: Թող բախտը խափանի մրմունջներիդ մեղեդին, ես հզոր կողոանջեմ այն, չարի նահատա՛կ, իմ հայրենի՛ք . . .

1906 թ.